«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Դաստիարակ՝ Հասմիկ Մամյան

Մանկապարտեզ՝«Նոյեմբերյանի թիվ 1 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1 5
ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ 5
ԷՔՍԿՈՒՐՍԻԱ:ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵ 5
ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 6
ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ 7
ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑ 7
ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ 8
ԳԼՈՒԽ2 11
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ 11
ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ 11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաներին պետք է դաստիարակել

ոչ թե երջանկության, այլ կյանքի,

աշխատանքի համար : Հենց դա էլ

նրանց երջանկության կբերի:

ՍՈՒԽՈՄԼԻՆՍԿԻ

Նախադպրոցական օղակը անձի ձևավորման կարևորագույն փուլերից մեկն է:Շատ կարևոր է այս փուլում հստակ իմանալ՝ ինչ պետք է սովորեցնել ,հաղորդել,ձևավորել և ինչ մեթոդներով ու ձևերով դա անել:

Երեխայի զարգացման և ձևավորման համար գլխավոր դեր են խաղում միջավայրը, ժառանգականությունը և դաստիարականությունը:Կազմակերպել երեխայի դաստիարակությունը՝նշանակում է նրան զինել որոշակի քանակությամբ գիտելիքներով,կարողություններով ու հմտություններով:

Աճող հետաքրքրասեր ու հետազոտող սերնդին համակողմանի ու ներդաշնակ զարգացում ապահովելու համար ,անհրաժեշտ է նրանց տալ մտավոր,բարոյական,աշխատանքային,գեղագիտական,ֆիզիկական,տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարականություն և զարգացում:Այս ամենը շատ սահուն և արդյունավետ ստացվում է նաև ճիշտ և կազմակերպված էքսկուրսիաների և մշակութային այցերի ժամանակ:

Թեմայի արդիականությունը:21-րդ դարի հետաքրքրասեր ու պրպտող մեր սերնդին անընդհատ նոր մոտեցումներ ու հետաքրքիր աշխատանքներ են պետք:Այդպիսի շատ լավ գործունեության ձևեր են էքսկուրսիաներն ու մշակութային այցերը:Էքսկուրսիաներն ու մշակութային այցերը ուսուցումը աշխարհի հետ կապելու,ուսուցանելու,դաստիարակելու արդյունավետ ,հետաքրքրքշարժ ու

ժամանակակից մեթոդ է։Զուր չէ ,որ ժողովուրդն ասում է. **<<ՄԵԿ ԱՆԳԱՄ ՏԵՍԱԾԸ ,ՀԱԶԱՐ ԱՆԳԱՄ ԼՍԱԾԻՑ ԼԱՎ Է>>։**

Կապը նոր չափորոշչի և ծրագրի հետ։Կրթական նոր ծրագրային 6 բաղադրիչներում էլ,որպես գործունեության ձև, կարևորվել և նշվել են էքսկուրսիաներն ու մշակութային այցերը,իսկ չափորոշիչներում հստակ երևում են բազում վերջնարդյունքներ,որոնց շատ սահուն,ավելի արդյունավետ և արագ կարելի է հասնել հենց այս գործունեության ձևով։

Նպատակը։Քանի որ շատ եմ կարևորում էքսկուրսիաների ու մշակութային այցերի դերը,իմ հետազոտական աշխատանքի տեսական մասով ու իմ փորձի ներկայացմամբ ուզում եմ ինքս էլ փաստել ու կարևորել այս գործունեության ձևը,նրա կարևորությունը ուսումնական գործընթացում։

Ընթացքը;Հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրել եմ մանկավարժական ձեռնարկներ ,նախադպրոցական կրթության չափորոշիչներն ու ծրագրերը ,մասնակցել եմ էքսկուրսիաների թեմայով դասընթացների,օգտվել եմ համացանցից և ըստ իմ ուսումնասիրած նյութերի պլանավորել եմ էքսկուրսիա դեպի մշակույթի տուն։

ԳԼՈՒԽ 1

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ:ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎ

Էքսկուրսիա բառը լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղևորություն։Էքսկուրսիաները

Տարածվել են 14-րդ դարի սկզբին և արտասահմանում,և մեզ մոտ։Էքսկուրսիան ուսուցման կազմակերպման ձև է,որը հնարավորություն է տալիս բնական պայմաններում կատարել առարկաների,երևույթների և գործընթացների դիտարկումներ, ուսումնասիրություններ։Պատահական չէ,որ նախադպրոցական կրթության բոլոր բաղադրիչներում որպես գործուեության ձև առկա են էքսկուրսիաները և մշակութային այցերը։

Էքսկուրսիաները կատարում են նույն գործառույթները,ինչ-որ դասերը՝ուսուցանող,դաստիարակող,զարգացնող.

ՈՒսուցանող

1. Գիտելիքների խորացում,առանձին առարկաների և երևույթների մասին պատկերացումների կազմում։

2. Գործնականում տեսական գիտելիքների կիրառում։

Զարգացնող

1. Դիտումներ կատարելու կարողությունների զարգացում,ուշադրության,հիշողության ընդունակության զարգացում։

Դաստիարակչական

1. Գեղագիտական դաստիարակություն։

2. Հայրենասիրության դաստիարակում,բնության նկատմամբ սիրո դաստիարակում։

Էքսկուրսիաները տեսականը դարձնում են գործնական և ավելի հետաքրքիր,դրանով իսկ օգնելով երեխայի ուշադրության կենտրոնացմանը և ինքնաբուխ ներգրավվելը գործունեության մեջ:

Էքսկուրաները նաև **շատ** լավ հնարավորություն է լավ ճանաչել սանին, նրա բնավորության գծերը:

Էքսկուրսիայի ընթացքում առաջ է գալիս մի կարևոր խնդիր ,այն է `ընկերասիրության ամրապնդում ու զարգացում, որն էլ իր հերթին նպաստում է կոլեկտիվ մտածելակերպի ձևավավորմանը:

Էքսկուրսիաներ կազմակերպելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ,այդ թվում երեխաների տարիքային առանձնահատկությունները:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Էքսկուրսիաները ընդլայնում են սանի մտահորիզոնը,նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով,անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ և երևույթներ,որոնք խմբասենյակ բերել հնարավոր չէ,հետաքրքրություն են առաջացնում շրջապատող աշխարհի հանդեպ:

Էքսկուրսիաներից կարևոր նշանակություն ունեն սաների խոսքի զարգացման համար:Ինչպես ասում է հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանը.<<**Խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի,իսկ միտքը զարգանում է,եթե մտքի առարկայի մասին սանը պարզ, կոնկրետ պատկերացում ունի**>>:

Էքսկուրսիայի ժամանակ բառը կապվում է կոնկրետ հասկացության,իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ,ինչն էլ հեշտացնում է յուրացնելը:Արդյունքում դառնում է կոնկրետ ու որոշակի գիտելիք:

Խոսքի զարգացմանը նպաստելու վառ օրինակ է նաև այն,որ երեխաները ավելի լավ են ձևակերպում և արտահայտում մտքերը էքսկուրսիայի վերաբերյալ:Էքսկուրսիայի ժամանակ նյութի կոնկրետությունն ու տպավորությունների անմիջականությունը հնարավորություն են տալիս բառապաշարով հարուստ, կազմակերպված,ճիշտ շարադրված մտքեր արտահայտել:

Էքսկուրսիաները կարևոր նշանակություն ունեն դաստիարակչական տեսակետից.երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն, կարգապահություն ու կազմակերպվածություն;Երեխաների մեջ զարգանում և էսթետիկական ճաշակը,նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամեն տեղ ՝ բնության մեջ, կյանքում և աշխատանքում:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑ

Էքսկուրսիան սաների գեղարվեստաստեղծագործական մտածողության ձևավորմանը նպաստող ոչ ավանդական եղանակներից է:Անկախ էքսկուրսիայի բնույթից ՝ թեմատիկ, թե սովորական, այն օժտված է բարձր ազդեցիկությամբ և արդյունավետությամբ:

Ենթադրվում է, որ արվեստին ու նրա ուղղություններին անմիջականորեն առնչվող էքսկուրսիաները այցելություններ են դեպի մշակույթի տարբեր օջախներ, թանգարաններ,թատրոններ ու կինոթատրոններ:Սրանցից զատ, ըստ հնարավորության, կարելի է այցելել արվեստանոցներ, փորձասրահներ, ներկա լինել արվեստի ստեղծագործության ծնունդին, մասնակիորեն ճանաչել ու բացահայտել դրա արարման գաղտնիքներն ու նրբությունները:

Էքսկուրսիաները կոչված են արթնացնելու սովորողների հետաքրքրությունները և խթանելու նրանց ստեղծագործական ակտիվությունը:Էքսկուրսիայից քաղված արդյունքը մեծ մասամբ կախված է դրա կազմակերպման ու իրականացման որակից, ինչպես նաև այն հանգամանքից, թե մանկավարժը որքանով է այն հետաքրքիր ու օգտակար դարձնում:

Աճող սերնդին բնության անզուգական գեղեցկություններին ծանոթանալու լավագույն միջոցներ են նպատակային էքսկուրսիաները:Դրանց ժամանակ է,որ երեխաների առաջ բացահայտվում է շրջակա աշխարհի գեղեցկության մի նոր երանգ,:

Գեղեցիկի մասին բառերը տեղ են հասնում միայն այն ժամանակ, երբ մարդը սրտով է զգում դրանք:

Էքսկուրսիաների ժամանակ ուսուցիչը պետք է անի ամեն բան, որպեսզի իր սաները լինեն ուշադիր և դիտողունակ,կարողանան զանազանել գունային երանգները,հասկանան բնության երևույթները,ըստ պատշաճի կատարեն գեղեցիկի նկարագրություններ:Այդ ընթացքում վարած զրույցների ժամանակ ուսուցիրը պետք է ձգտի ոչ միայն գիտելիքներ

հաղորդել,այլև դաստիարակել բազմակողմանի զարգացած, բարձրաճաշակ, նուրբ ու հուզական ներաշխարհով մարդիկ:

Մեր օրերում աշակերտները հնարավորություն չունեն այցելել համաշխարային նշանակության թանգարաններ, պատկերասրահներ, դիտել աշխարհահռչակ նկարիչների ու քանդակագործների ստեղծագործությունների բնօրինակները:

Այդ բաց լրացնելու, սաների գեղարվեստական մտածողության և ընդհանուր հոգևոր զարգացման խնդիրներին մանկավարժական լուծում տալու տեսանկյունից ՝ օգտակար կարող են լինել համակարգչային CD-ROM սկավառակները:Գեղագիտական բովանդակությամբ համակարգչային սկավառակները կարող են լինել հանրագիտարանային բնույթի, վիրտուալ էքսկուրսիաներ պարունակող և այլն:

Այս շարքից է <<**Ճարտարապետական գլուխգործոցներ**>>սկավառակը, որը ներկայացնում է համաշխարհային ճարտարապետության գոհարները,նրա տարբեր ոճերն ու ազգային ավանդույթները՝ լսողական, տեսողական և բնագրային տարբերակներով:Վիրտուալ էքսկուրսիաներն ուղեկցվում են հաճելի երաժշտական ձևավորմամբ, բացատրականներով ու զվարճալի հավելումներով :

<<**Գեղանկարչության մեծ հանրագիտարան. Լուվր**>>սկավառակը մեզ է ներկայացնում աշխարհի այն մեծահամբավ նկարիչների արվեստը,որոնց ստեղծագործությունները ներկայացված են Լուվրում:Սկավառակը պարունակում է 820կտավ, ինչպես նաև նկարչական ոճերին վերաբերող ու կենսագրական բնույթի տեղեկություններ:Այս ամենն ուղեկցվում է դասական կոմպոզիտորների անմահ ստեղծագործություններով:

Արվեստի մասին գիտելիքների հենքով էլ ձևավորվում է ճաշակ:Դա հնարավորություն է տալիս նկատել գեղեցիկը և իրական գեղեցկությունը տարբերել թվացյալից:Էքսկուրսիաների կազմակերպումը հարստացնում և ուժեղացնում է երեխաների դիտողականությունը, ստեղծագործական երևակայությունը, հնարամտությունը,բարձրացնում դասերի արդյունավետությունը, մշակում երեխաների գեղագիտական ճաշակն ու հմտությունները:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Էքսկուրսիայի ճիշտ անցկացումը մանկավարժից պահանջում է էքսկուրսիայի նպատակի և բովանդակության ճիշտ պլանավորում,կազմակեպում և ստացված արդյունքների

ամփոփում:Էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել երեք հիմնական փուլերի վրա:

1.Նախապատրաստում

2.Անցկացում

3.Ամփոփում

1.Էքսկուրսիայի նախապատրաստումը.

Յուրաքանչյուր էքսկուրսիա որոշակի նպատակ պետք է ունենա,նպատակ,որը պետք է բխի տարիքային խմբի ծրագրային վերջնարդյունքներից և չափորոշիչներից:Էքսկուրսիայի նպատակը և օբեկտը պետք է կոնկրետ ու որոշակի լինի,որպեսզի ըստ այդմ էլ պարզ լինի,թե էքսկուրսիայի ընթացքում երեխաները ինչ գիտելիքներ են ստանալու,ինչ նյութեր են ուսումնասիրելու կամ հավաքելու:Յուրաքանչյուր էքսկուրսիայի նպատակը որոշելուց հետո պարտադիր կարգով մանկավարժը պետք է վերստին մանրամասնորեն ուսումնասիրի այդ թեման,թարմացնի ու լրացնի գիտելիքները այդ թեմայի վերաբերյալ,որպեսզի կարողանա բավարար չափով տեղեկություններ տալ երեխաներին,ճիշտ ու պարզ պատասխաններ տալ էքսկուրսիայի ընթացքում ծագած հարցերին:Նյութերի ուսումնասիրությունից հետո պետք է կատարել էքսկուրսիայի վայրի ընտրություն,որոշվի ընթացքը և նպատակահարմար ճանապարհը:Նախնական ուսումնասիրությունից հետո մանկավարժը կազմում է էքսկուրսիայի պլանը:Պլանը կազմելիս պետք է հաշվի առնել հիմնական հարցերը.

1.Էքսկուրսիայի թեման

2.Այն գիտելիքների համառոտ շարադրանքը,որը երեխաները պետք է ստանան էքսկուրսիայի ընթացքում

3.Էքսկուրսիայի ընթացքն ու հաջորդականությունը,էքսկուրսիայի ընթացքում շոշափվող հիմնական հարցերը,երեխաներին տրվելիք խմբային կամ անհատական աշխատանքի առաջադրանքները

4.Էքսկուրսիայի վերջում անցկացվող ամփոփիչ զրույցի համառոտ բովանդակության շարադրում

5.Էքսկուրսիայի կահավորումը /հանդերձանքը,գործիքները և այլն/

Մինչ էքսկուրսիա գնալը մանկավարժը պետք է երեխաներին բացատրի նպատակը,երեխաների անելիքները:Առանց երեխաներին նախապատրաստելու էքսկուրսիան կարող է դառնալ անարդյունավետ:Երեխաներին էքսկուրսիային նախապատրաստելու մեջ մտնում է նաև կարգապահության ուղղությամբ տարվող միջոցառումները,զրույցը այդ ուղղությամբ:Քանի որ էքսկուրսիաները լինում են մոտակա և հեռավոր,ուստի հեռավոր էքսկուրսիայի դեպքում պետք է խորհրդակցել նաև ծնողների հետ:Էքսկուրսիայի նախապատրաստական աշխատանքների մեջ է մտնում նաև հաստատության տնօրինությանը տեղյակ պահելը:

2.Էքսկուրսիայի ացկացումը

Էքսկուրսիան սկսվում է նրանով ,որ էքսկուրսիայի վայրում մանկավարժը իրար է հավաքում բոլոր սաներին,հիշեցնում էքսկուրսիայի նպատակը,երեխաների անելիքներն ու պարտականությունները:Էքսկուրսիայի ժամաակ մանկավարժը երեխաների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը,որպեսզի աշակերտը անհրաժեշտ ուշադրությամբ դիտի,ուսումնասիրի այն:

3.Էքսկուրսիայի ամփոփումը

Ամփոփումը կարող է տեղի ունենալ ինչպես էքսկուրսիայի վայրում,այնպես էլ խմբասենյակում:Այն կարող է բանավոր զրույցի,հարց ու պատասխանի,պատմելու բնույթ կրել,կարող է նաև հավաքած նյութերի ուսումնաիրության ձևով անցկացվել:

ԳԼՈՒԽ2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ
ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

Թեմա՝Բնությունը գեղանկարներում

Տարիքը՝Ավագ խումբ /5-6տ/

Նպատակը:1. Ձևավորել գեղագիտական ճաշակ:2. Զարգացնել երկխոսեու,քննարկելու հմտությունը:3. Ճանաչի նկարիչ Հրանտ Կիրակոսանի գեղանկարների որոշ նմուշներ:

Վերջնարդյունքը:1. Կբացահայտի և կգնահատի գեղեցիկը:2. Կհամագործակցի խմբային աշխատանքներում:3. Կճանաչի և կգնահատի նկարիչ Հրանտ Կիրակոսյանի գեղանկարների որոշ նմուշներ:

Կարողունակություններ:1. Մշակութային

2. Ճանաչողական և մոտիվացիոն

3. Լեզվական և հաղորդակցման

Նախապատրաստական աշխատանքներ:

1. Նախապես ընտրեցի թեման,հետո սկսեցի ուսումնասիրել իմ ընտրած թեմայի շուրջ տարբեր նյութեր:Նշեմ նաև,որ այցելության թեման բխում էր իմ շաբաթվա թեմայից:Թեմայի շուրջ ուսումնասիրություններից հետո պլանավորեցի այցելությունը:

2. Այցելության նպատակի ,օրվա և այլ մանրամասներ ներկայացրի տնօրենին:

3. Մինչ այցելությունը ես ինքս այցելեցի Նոյեմբերյանի մշակույթի տուն ,հանդիպեցի տնօրենին,ներկայացրի մեր այցելության նպատակն ու ընթացքը,ուսումնասիրեցի ցուցասրահը:

4. Քանի որ այցելությունը հեռավար էր լինելու, քննարկում ունեցա նաև ծնողների հետ:

5. Տեղափոխման հարցը կարգավորելու համար դիմեցի վարչական ղեկավարին:

6. Այցելության նախորդ օրը զրույց կազմակերպեցի երեխաների հետ,ոչ ամբողջությամբ ասելով մեր այցելության մանրամասները:

Խ. Խթանման փուլը անցկացրել եմ խմբասենյակում:Խթանումը արել եմ կանխագուշակում 3 քայլից մեթոդով:Երեխաներին ասել եմ՝ հիմա փորձեք գուշակել, թե ուր ենք այցելելու:Ես ձեզ կօգնեմ հարցերով.

1. Այնտեղ կան շատ գունեղ աշխատանքներ:

2. Այդ աշխատանքները փակցված են պատերին:

3. Այդ աշխատանքները նկարչի ձեռքի աշխատանքներ են:

Ի. Իմաստի ընկալման փուլը սկսվեց ցուցասրահում:

1. Սկսելուց առաջ հավաքեցի իմ շուրջը երեխաներին և հիշեցրի, թե ուր ենք եկել,ինչ ենք անելու և ինչպես պետք է մեզ պահենք ցուցասրահում:

2. Մեզ ջերմորեն դիմավորեց մշակույթի տան տնօրենը և ուղեկցեց ցուցասրահ, որտեղ մեր հայրենակից Հրանտ Կիրակոսյանի <<ԻՄ ԲՆԱՇԽԱՐՀԻ ԳՈՒՅՆԵՐԸ>> խորագրով գեղանկարներն էին ցուցադրված:

3.Հարգելի Սոնյա Զուրաբյանը շատ հասանելի ներկայացրեց երեխաներին ցուցասրահի,գեղանկարների,հեղինակի մասին մանրամասներ:

4. Երեխաներին բաժանեցի բնանկարներ,խնդրեցի կազմեն զույգեր գտնելով իրենց բաժին ընկած նկարի նմանը ու կազմելով զույգեր շրջեն և ուսումնասիրեն գեղանկարները:

5. Վերջում երեխաների հետ շրջան կազմեցինք և մեր շնորհակալությունը՝ ջերմ ընդունելության համար, հայտնեցինք մի երգ նվիրելով մշակույթի տան աշխատակիցներին:

Կ.Կշռադատումը կատարեցինք խմբասենյակում՝ հարցերի միջոցով.

1. Երեխաներ այցելության ընթացքում ի՞նչը ձեզ ավելի շատ դուր եկավ:
2. Ի՞նչ էիք զգում,երբ նայում էիք նկարներին:
3. Կցանկանա՞ք ունենալ այդպիսի նկար ,ինչու՞:
4. Կցանկանա՞ք նորից այցելել որևէ ցուցահանդես:

Աշխատանք ծնողների հետ:Տուն ճանապարհելիս խնդրել եմ՝ հաջորդ օրը բերել որևէ գեղանկար,որը նկարելու էին ծնողների հետ միասին:Երեխաները հաջորդ օրը եկան շատ սիրուն գեղանկարները ձեռքներին:

Խմբում պատրաստեցինք ցուցահանդես,երեխաները շրջեցին,նայեցին,հետո ասում էին,թե որ աշխատանքը հավանեցին և ինչը դուր եկավ տվյալ աշխատանքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանք կատարելուց և ըստ դրա այցելություն կազմակերպելուց և անցկացնելուց հետո եկա այն եզրակացության ,որ յուրաքանչյուր էքսկուրսիայի և մշակութային այցի արդյունավետությունը կախված է թեմայի ճիշտ ընտրության ,նախապատրաստական փուլը ճիշտ կազմակերպելուց և ընթացքը ճիշտ պլանավորելուց:Շատ կարևոր է նաև հաշվի առնել երեխայի տարիքային առանձնահատկությունները:Էքսկուրսիաների միջոցով երեխաների մեջ ձևավորվում են բազմաթիվ արժեհամակարգեր և ավելի լավ են ձևավորվում ու զարգանում կարողունակությունները:Բացի այդ էքսկուրսիաների և մշակութային այցերի ժամանակ մանկավարժը մեկ այլ տեսանկյունից է բացահայտում սաներին:

Կարծում եմ առանց էքսկուրսիաների և մշակութային այցերի թերի կլինի երեխաների կրթությունն ու զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախադպրոցական ավագ խմբի կրթական համալիր ծրագիր։

2. Նախադպրոցական կրթության,պետական կրթության չափորոշիչներ։

3. hmk.am/wp-content/upioads/2021/05/mankavarjutyun-usumnakan-dzernark:pdf

Մանկավարժություն ուսումնական ձեռնարկ Ամիրջանյան Յու. Ա.

Սահակյան Ա.Ս.

Մանկավարժություն 2015

4.Նախադպրոցական մանկավարժություն Ս.Ա. Մարության

Ա.Մ. Դալլաքյան

5.Նախաշավիղ գիտամեթոդական հանդես,Երևան 2010